

Սուրբ Երրորդութիւն Հայաստանեայց
Առաքելական Մայր Եկեղեցի
Holy Trinity Armenian Apostolic Mother Church
Զայն Voice

Volume XXI: Issue 1 Յունուար - January 2021



2226 Ventura Street • Fresno, CA 93721
(559) 486-1141 Office; (559) 486-1939 Fax
www.holytrinityfresno.org



Holy Trinity Ladies' Guild

Drive Thru Dinner

Friday, January 15, 2021

Church Alley Pick-up

Between 4:00 pm—6:00 pm

PRE ORDER ONLY

ORDERS ACCEPTED THROUGH

MONDAY, JANUARY 11, 2021

\$15.00 Donation

Mezza

String Cheese, Olives & Yalanchi

Dinner

Chicken Harissa & Berag

Dessert

To order

Call/text Linda at 559-779-3803 or

Email: Patty at ptorosian559@gmail.com

© Laurie Ross

ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՆՈՐ ՏԱՐՈՒՄԱՆ

ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ - 2021

ԿԵՆԱՐԱՐ ՅՈ՛ՅՄ ԿԸ ՃԱՌԱԳԱՅԹԷ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄՍՈՒՐԷՆ

Շատ սիրելի՛ ժողովուրդ թանկագին, եղբայրներ եւ քայրեր ի Յիսուս,

2020 թուականը Երկիր մոլորակին համար խաղաղութեամբ, լոյսով, օրհնութեամբ գեղուն օրեր ու ամիսներ չբերաւ: Սաստիկ ձմեռ տիրեց ամբողջ տարուան վրայ: Փետրուարին, «Քորոնա» ժահրի համաճարակը եկաւ հարուածելու աշխարհը եւ խլեց միլիոնաւոր զոհեր, պատճառեց համաշխարհային տնտեսութեան անկում եւ մինչեւ օրս դամոկլեան սուրի պէս կախուած կը մնայ մարդկութեան ճիտին՝ վերջնական դարմանի չգոյութեան պատճառով: Օգոստոսին, ականատես եղանք Պէյրութի ահասարսուտ պայթումին, որուն հետեւանքները շատ ծանր կշռեցին այլապէս ալ տագնապահար Լիբանանի համար, առաւել՝ միջին արեւելեան ու եւրոպական կարգ մը երկիրներու ռազմական, քաղաքական եւ ընկերային անապահով վիճակը հաշուի առած կը հաստատենք, որ իրօք, 2020 թուականը աշխարհի համար աղէտաբեր, ծանր տարի մը եղաւ: Ի լրումն, նաեւ պէտք է խոր ցաւով նշենք, որ Սեպտեմբերի վերջին օրերէն մինչեւ Նոյեմբեր ամսուն առաջին տասնօրեակ Հայաստան-Արցախի դէմ շղթայազերծուած ազերի-թրքական պատերազմին պատճառով ամէնէն աւելի ծանր գին վճարեց մե՛ր ազգը, մե՛ր հայրենիքը: Հայութեան լուսաւոր եզերքի մթագնում, հայկական բանակի բազմահազար զոհեր, գաղթական արցախցիներ, գերիներ եւ անհետ կորածներ մեծապէս ընկճեցին Եկեղեցի ու ժողովուրդ՝ հայկական բարձրաւանդակէն մինչեւ հայաբնակ հեռաւոր ուստաններ: Աւելի՛ն. տնագուրկ ու որբեւայրի, զաւակ, հայր ու մայր, պապենական հող ու հայրենիք կորսնցուցած հայութեան կարեւոր հատուած մը կայ մեր կեանքին մէջ առ այսօր, որ պատերազմին պատճառած տագնապի ահագնութենէն տակաւին կը տնքայ դառնօրէն: Իրաւա՛մբ մենք ապրեցանք աւելի՛ դժուարը, աւելի՛ դառնը, բառերով անբացատրելին՝ Կրա՛ կը:

Եթէ աղէտներն ու արհաւիրքները, անհատական թէ հաւաքական վիշտերն ու փորձութիւնները, անկումներն ու կորուստները ըլլային կեանքի ու մահուան որոշիչ որակները, ապա եւ աներկբայօրէն ազգովին հասած պէտք չէ ըլլայինք մինչեւ 2021 թուականի շեմը:

Աւելի պարզ,

Եթէ հսկայ Բաբելոնի պետին՝ Բելի դէմ պատերազմելով Հայկ Նահապետն ու իր որդիները ազատ ու ինքնիշխան ապրելու յոյսը չկորսնցուցին ու յաղթեցին,

Եթէ Տիգրան Մեծ Աշխարհակալի կայսրութեան փլուզումէն ետք, հայ ժողովուրդը վերատարածուելու իր յոյսը չկորսնցուց,

Եթէ 387 թուականին, երբ Հայաստան բաժնուեցաւ Բիւզանդիոնի եւ Պարսակաստանի միջեւ, եւ մեր ժողովուրդը ՄԷԿ մնալու յոյսը չկորսնցուց,

Եթէ Վարդանանց ճակատամարտին արիւն ու քրտինք միախառնուած հոսեցան, եւ ազգը հաւատքով առաջնորդուելու իր յոյսը չկորսնցուց,

Երբ հայը Անի՛ն կորսնցուց, բայց Մայրաքաղաք ունենալու իր յոյսը չկորսնցուց,

Երբ բազմակշիռ ու բազմաբնոյթ պատերազմներ, քառսային վիճակներ ու մեծադորոդ ալիքներ հարուածեցին Հայաստանը, այլեւ արաբական, մոնկոլական, սելճուքեան եւ այլացեղ արշաւանքներ ու ծանրագոյն հարկեր բազում անգամներ խորտակեցին մեր անառիկ ամրոցն ու աւերակ ըրին մեր բնակավայրերը, այսուհանդերձ, ազգը դարձեա՛լ չկորսնցուց պետականութիւն ունենալու իր յոյսը,

Երբ հաստաբետ կաղնիի ծառեր փուլ եկան մեր կեանքին մէջ, բայց մեր ազգը ընկճուելո՛ւմ հանդերձ չկորսնցուց նոր ուստերով ուռճանալու իր յոյսը,

Երբ Հիւսիսէն, Արեւելքէն, Հարաւէն ու Արեւմուտքէն փչեցին սառնաշունչ քամիներ, երկնակամարը ծածկեցին թանձր մշուշներ, պայծառ արեւը խաւարեցին գորշ ամպեր, բայց մեր ժողովուրդը նորէ՛ն յուսաց եւ չկորսնցուց աստուածադիր ծիածա՛նը տեսնելու իր յոյսը,

Երբ ազգը քալեց մահուան յորձանուտէն, ապրեցաւ դառնադի Եղեռն, 1915ի Ցեղասպանութիւն, կորսնցուց ամէն բան, բայց վերընձիւղուելու իր յոյսը չկորսնցուց,

Որովհետեւ այդ անմեռ յոյսը ճառագայթեց Բեթղեհէմի՛ մտուրէն եւ մեզ դաստիարակեց կեանքին մի՛շտ յոյսով նայելու երկնատո՛ւր առաքի՛նութեամբ: Ազգովին կառչած մեր նախնիներուն ու պապերուն ոգեղէն դարաւոր ամրութեան, այսօր մենք թոյլ չենք տար, որ հայ ժողովուրդի յոյսի աննիւթական, կենսատու բաժակը, որ այլապէս անկորնչելի կտակ մըն է՝ վստահուած ապրողներուս, ինչայ ու փշրուի, միով բանի՛ յուսահատութիւնը պատէ ազգին եւ ի հետեւանք՝ մենք ամօթով մնանք մեր ազգային ինքնութիւնը ձեւաւորած, հայոց պետականութիւնը կերտած, Եկեղեցին պայծառացուցած անկրկնելի տիտաններու, հրեղէններու, սուրբերու եւ անմահներու առաջ:

Արդ, յանուն մեր ազգի հաւաքական մեկութեան, ինչպէս անցեալին, նոյնպէս ալ այսօր մէկ կողմ կը ձգենք մեր անհատական նախընտրութիւնները եւ կը բոլորուինք միացեալ զօրութեան գաղափարին շուրջ, զի պատմութիւնը կը վկայէ, որ երբ միացած ու մէկ բռունցք դարձած ենք՝ եղած ենք աննուաճելի, անընկճելի, հզօր ու յաղթական: Այո՛, ճիշդ է, որ դար ու դարեր փորձաքարի զարնուած ենք, բայց ազգովին վերստին փթթած ու ծաղկած ենք, որովհետեւ մեր կոճղը մէկ է, եւ մենք անհատ առ անհատ այդ հաստաբուն կոճղին ճիւղերն ու տերեւները կը կազմենք:

Թէեւ բաղձալիօրէն պարզ ու խաղաղ, արեւոտ ու պայծառ չէ հայոց երկնակամարը ներկայիս, մութ ու մռայլ ամպեր շատ են պաշարած մեր հայրենիք Հայաստանն ու Արցախը, այսուամենայնիւ, այս Սուրբ Օննդեան տօնին, երբ պահ մը մեր հայեացքները ուղղենք երկինք, աշխարհի ո՛ր մասն ալ գտնուինք, հաւատքի աչքերով կրնանք տեսնել Բեթղեհէմէն ծագած կենարար յոյսը, որ բոլոր ազգերէն առաջ մե՛ր ազգին մէջ թափանցեց իբրեւ նոր կեանքի սկիզբ եւ բոլորէն իսկ առաջ մե՛նք՝ որպէս պետութիւն ու ազգ, դարձանք Յիսուսին՝ Քրիստոնէայ:

Յոյս, որ մեր ազգի զաւակներուն համար ընդմիշտ խորհրդանշեց հոգեւոր նոր բարձունքներ նուաճելու ուղի, Բարձրեալին մատչելու մտածման նոր եղանակ ու ապրելու նոր ընթացք,

Յոյս, որուն շնորհիւ պատմութեան բոլոր քառուղիներուն մենք մեզ շրջապատող մութ աշխարհը լուսաւորեցինք, ջերմութիւն ու մարդկայնութիւն, զիտութիւն ու կրթութիւն, մշակոյթ ու հոգիի սնունդ բաշխեցինք աշխարհին մեր հոգեւոր ու զիտական հանճարներով, մեր աստղաբոյլ յաղթականներու ստեղծագործութիւններով եւ մեր ցեղին յատուկ արիւթեամբ,

Յոյս, որ յաչս մեր ազգի զաւակներուն Յիսուսով՝ ձուլուեցաւ,

Յոյս, որ թէեւ չի տեսնուիր, չի կշռուիր, չի բռնուիր, չի բացատրուիր, բայց վահանի պէս մեր հոգին իր պաշտպանութեան տակ առած՝ անպայման կը զգացնէ ինքզինք մեր կեանքի բոլոր օրերուն, որովհետեւ մենք ազգովին որոշած ենք ապրի՛լ, այլ ո՛չ մեռնի՛լ՝ կառչած մեր դարաւոր ճշմարիտ հաւատքին, Յիսուսէ՛ն ճառագայթող, մեզ Մնայունին կապող, բեթղեհէմեան յոյսին: Յիրաւի Աստուած ուզեց ցոյց տալ, թէ ինչ հրաշալի են իր ծրագիրները մեզի համար. մտուրի մէջ ի Բեթղեհէմ ծնած Քրիստոսը ճանչնալ եւ վայելել այն մեծագոյն փառքը, որուն կը սպասենք մենք յոյսով:

Առ այդ, երկինք բարձրացնելով կենարար յոյսով յորդուն մեր կեանքի բաժակը, ահա՛ եւ դարերու խորքէն լսուող հաւատքի՛ ձայնով կը կրկնենք պարզ, բայց իմաստուն այս գովերգութիւնը. «Բայց ես ընդմիշտ յոյսս Քեզի՛ կապած եմ, եւ պիտի շարունակեմ օրհներգել Քեզ» (Սաղմոս 71.14):

Տօնական յուսավառ ապրումներով կու գամ շնորհատրելու ձեր բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը՝ մաղթելով, որ 2021 թուականը համայն աշխարհին պարգեւէ խաղաղութիւն, բոլոր մարդերուն՝ առողջութիւն, այլեւ մեր ազգի գաւակներուն ու հայրենիքին համար ըլլայ բեղուն ու բարեբեր, յուսալից ապագայի նոր տեսիլքներով վարարուն, իսկական վերածննդեան տարի:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

**Քրիստոսաւանդ սիրով,
Աղօթարար**

**Թորգոմ Եպս. Տօնյեան, Առաջնորդ
Ա.Ս.Նահանգներու Արեւմտեան Թեմի**

6 Յունուար, 2021
Լոս Անճելըս, Ա.Մ.Ն.



*Watch the Holy Badarak on our Facebook
and YouTube pages at 10:00 am.*

To watch on YouTube, search Holy Trinity Armenian Apostolic Church

Also, please subscribe to our YouTube

LIVING HOPE RADIATES FROM THE MANGER IN BETHLEHEM

Beloved brothers and sisters in Christ,

The year 2020 was not a year filled with expectations that we were waiting for because of all the tribulations and problems that we faced. In February, the Corona virus struck the world and claimed millions of lives, causing the world economy to collapse and we are still in the midst of the chaos it has caused. In August, we witnessed the horrific bombing in Beirut, the consequences of which weighed heavily on the otherwise troubled Lebanon. Also, given the military, political and social insecurity of some Middle Eastern and European countries. In addition, it should be noted with deep sorrow that our nation, our homeland, paid the heaviest price due to the Turkish-Azeri war unleashed against Armenia-Artsakh from the last days of September to the beginning of November. It brought darkness on Armenia; thousands of victims, refugees, captives and the missing greatly oppressed the Church and demoralized the people. Because, today in our midst, we have those who are homeless and widowed, children, fathers and mothers, who lost their ancestral land. Indeed, Armenians lived the most difficult, the most bitter, the inexplicable.

If disasters and catastrophes, individual or collective sorrows and trials, failures and losses were the decisive qualities of life and death, then we should not have reached the New Year 2021.

Simply put, if Hayg Nahabed and his sons did not lose the hope of living free and sovereign when they fought against the great ruler of Babylon, Bel, and won,

If after the collapse of the empire of Dikran the Great, the Armenian people did not lose hope of redistribution,

If in 387, when Armenia was divided between Byzantium and Persia, our people did not lose hope of remaining one,

If blood and sweat were mixed during the battle of Vartanants, the nation did not lose hope of being guided by faith,

When Armenians lost Ani, but did not lose its hope of having a capital,

When various wars struck Armenia; Mongols, Seljuks and other raids shattered our impregnable fortress and ruined our settlements, we still did not lose hope for the future,

When we faced various obstacles, even though depressed, we did not lose hope of growing through those difficulties,

When the storms came in from the North, East, South and West, the sky was covered with a thick fog, the bright sun was darkened by dark clouds, but our people remained strong in hope and did not lose hope of seeing the rainbow of tomorrow,

When the nation walked the whirlpool of death, lived through the bitter Genocide of 1915, it lost everything, but did not lose hope of re-emergence,

For that immortal hope radiated from the manger of Bethlehem and educated us with the heavenly virtue of always looking to life with hope. Clinging to the centuries-old spiritual strength of our ancestors, today we will not allow the immaterial, life-giving cup of hope of the Armenian people, which is otherwise an indestructible testament to those who live in trust, to fall and be shattered. Let us bow before the great saints and immortals who formed our national identity, created the Armenian statehood and enlightened the Church.

Now, in the name of the collective unity of our nation, as in the past, today we set aside our individual preferences and unite around the idea of a united power, because history shows that when we became united, we became invincible, strong and victorious. Yes, it is true that we have been tested for centuries, but nationally we have blossomed because we are one.

Although our sky is not as bright and peaceful, our homeland Armenia and Artsakh are surrounded by many dark and gloomy clouds, nevertheless, this Christmas, when we look at the heavens, through the eyes of faith we can see the life-giving hope of Bethlehem that pervaded our nation before all nations as the beginning of a new life.

Hope, which became a symbol for the children of our nation, became a way to reach new spiritual heights and a new way of living,

It is because of that hope which we have illuminated the darkness around us throughout history, spread warmth and humanity, science and education, culture and food to the world through our spiritual and scientific geniuses, the works of our astronomical victors and the special courage of our race,

The hope which bonds the children of our nation with Jesus,

The hope that although it is not seen nor explained, but our soul is under its protection like a shield, because we as a nation have decided to live and not die, clinging to our centuries-old faith, binding us to the hope of Bethlehem. God really wanted to show us how wonderful His plans are; to understand that Christ born in the manger is the greatest glory that we hoped for. Thus, raising the cup of life-giving hope towards heaven, we repeat this simple but wise praise; “But I trust in You forever, and I will continue to praise You.” (Psalm 71:14).

I greet you all on the New Year and Christmas. We wish the New Year 2021 to bring peace, health and happiness to all, and for the children of our nation and homeland to live full of new visions and a hopeful future; a true year of rebirth.

**HAPPY NEW YEAR
CHRIST IS BORN AND REVEALED
BLESSED IS THE REVELATION OF CHRIST**

With Christian love,

**Bishop Torkom Donoyan, Prelate
Western United States**

January 6, 2021
Los Angeles, California


Dear Parishioners,

It is January, and we are all looking for a new start in 2021. We don't know what the future holds, but we can be optimistic that normalcy is around the corner. With optimism in my heart, I am hoping we will soon be able to meet to give Christian hugs and kisses to one another.

As we are gathering distantly, please don't forget to pray for each other. We all have different needs, some more than others, but through prayer God will hear us and may grant us the desires of our hearts.

Although we have not been able to see each other, our congregation is strong and we will be there for any need that may arise. If anyone has any needs that the church family can help, contact Hayr Soorp and he will pass it on to the appropriate person for help.

We have food deliveries scheduled for January and February. Please help sell or purchase meals to offset the revenue loss from 2020. Thank you to Altar servers, Aid Organizations, Mas Committee, Staff and Board members who helped us get through 2020.



\$950,000
\$900,000
\$850,000
\$800,000
\$750,000
\$700,000
\$650,000
\$600,000
\$550,000
\$500,000
\$450,000
\$400,000
\$350,000
\$300,000
\$250,000
\$200,000
\$150,000
\$125,000
\$100,000
\$75,000
\$50,000
\$25,000



If you can, please donate towards our remodel project. Thank you.

FUNERAL SERVICES



Graveside services were held for **NOUBAR APKAR AVEDIAN** on Tuesday, December 1, 2020 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to his nieces Maria Gabriel, Sylva Kayaan, Jeanette Shewayat, Violet Zakko, Nephews Jack Avedian, Sarkis Avedian, Mary Avedian and their families.

Chapel services were held for **HOVSEP ANTONIAN** on Friday, December 11, 2020 at the Chapel of the Light Funeral Home. Our sincere condolences to his wife Asdghig Antonian, daughter Vicki and husband Serge Abdalian, son Vahram and wife Rosanna Antonian, grandchildren Zaven and Lucine Antonian.



Graveside services were held for **ROSS GARABEDIAN** on Friday, December 11, 2020 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences are extended to his cousin Richard Elia and his extended family and friends.

Graveside services were held for **EMMA LATCHINIAN** on Monday, December 14, 2020 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to her sister Victoria Arteen, nephew Azad Halmi, and her extended family and friends.



Graveside services were held for **DAVID WRIGHT** on Tuesday, December 22, 2020 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to his sister Susan and husband Krikor Poladian and his extended family and friends.

Graveside services were held for **ARAM ATIKIAN** on Tuesday, December 29, 2020 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to his wife Akabi Atikian, sons Shant & wife Sylva Atikian, Harout Atikian, and grandchildren Sarkis and Sophie.





Private services were held for **SERPOUHIE OHANNESSIAN** who passed away on Sunday, December 6, 2020. Interment was at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to her husband, Kevork Ohannessian, her children Angele Ohannessian, Hygo Ohannessian, Astghik Ajamian, Yerevan and wife Ruzanna Ohannessian, Dikran Ohannessian, and Satenig and husband Richard Sanikian, her grandchildren Kayaneh Ajamian, Armen Ajamian, Sophia Ohannessian, Aren Sanikian, Angele Ohannessian, Carter Ohannessian, Armani Sanikian, and Stephan Ohannessian, her sister, Aznif Kalinian, her brother and his wife, Boghos and Osana Khatchadourian and many nephews and nieces.

“The angel said to me, ‘These words are trustworthy and true. The Lord, the God who inspires the prophets, sent His angel to show His servants the things that must soon take place.’” Revelation 22:6

The word providence from a Christian perspective is defined as “the protective care of God as a spiritual power (Oxford Languages).” As this period of uncertainty and trepidation continues with more lockdowns and concerning news about COVID, now more than ever, we must remind ourselves of God’s providence and that His words are trustworthy and true. God is everlasting and His power and providence is evident in the past, now today, and will be in the future. Here are some Bible verses that reinforce the truth that God is always with those who believe in and love Him:

- “Have I not commanded you? Be strong and courageous. Do not be afraid; do not be discouraged, for the Lord, your God, will be with you wherever you go.” Joshua 1:9
 - “So do not fear, for I am with you; do not be dismayed, for I am your God. I will strengthen you and help you; I will uphold you with my righteous right hand.” Isaiah 41:10
 - “For I am convinced that neither death nor life, neither angel nor demons, neither the present nor the future, nor any powers, neither height nor depth, nor anything else in creation, will be able to separate us from the love of God that is in Christ Jesus our Lord.” Romans 8:38-39
 - “‘For I know the plans I have for you,’ declares the Lord, ‘plans to prosper you and not to harm you, plans to give you hope and a future.’” Jeremiah 29:11
- Not only does God promise to help His children in this life, but He also guarantees them eternity with Him in Heaven. In Revelations 22:5, John writes, “They will not need the light of a lamp or the light of the sun, for the Lord God will be their light. And they will reign for ever and ever.” So, as we begin a new year and celebrate the birth of Jesus, let us be comforted in the providence of God. We are under the protective care of God, Jesus, and the Holy Spirit. Let us remind ourselves that God’s words are trustworthy and true. In doing so, we can live this life to the fullest while keeping our hearts fixed on the future we have in Jesus.

Dear Lord, please strengthen our faith in You and help us to keep our eyes fixed on You regardless of the adversity we face; may our lives demonstrate that we are followers of Christ. We are comforted that Your words are trustworthy and true. Please give me confidence where and when I do not have it! We ask that You watch over our families, friends, and us in the coming weeks, granting us health, protection, and wisdom. All these things we pray in Jesus’ name. Amen!

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Պաշտօն պիտի կատարուի,

Յունուար 3

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ մահուան 3-րդ տարելիցին առիթով, խնդրանքով՝ դուստրին Ռոզի եւ ամուսնոյն Պրայլն Պետրոսեաններու, թոռնիկին Արմէն եւ տիկնոջ Աթէֆլնի Պետրոսեաններու ու իրենց զաւակներուն Լիլիլընի եւ Վիվիլընի:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ԼՈՒՍԻԼ ԳԱՀՎԵՃՅԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առիթով եւ ՃԷԳ ԳԱՀՎԵՃՅԵԱՆԻ մահուան 4-րդ տարելիցին առիթով, խնդրանքով՝ դուստրերուն Ճէֆի Հօլիմկզուօրդի, Լեսլի Միմասի, Լիսա Մուտիի, եւ իրենց զաւակներուն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԹՉԵԱՆԻ մահուան 5-րդ տարելիցին առիթով, ՄԻԼՏՐԸՏ ԾԻՐԻՆԻ մահուան 5-րդ տարելիցին առիթով, եւ ԷՏ ԾԻՐԻՆԻ 13-րդ տարելիցին առիթով, խնդրանքով՝ Այրիս Սահաթեանի, Վիֆթըր եւ Արլին Սահաթեաններու եւ ընտանիքին, Մարֆ եւ Մարկարէթ Ծիրիններու եւ ընտանիքին, եւ Պիլ եւ Քրիսթին Սահաթեաններու եւ ընտանիքին:

Յունուար 10

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՅՈՎՍԵՓ ԱՆՏՈՆԵԱՆԻ մահուան ֆառասումքին առթիւ, խնդրանքով՝ տիկնոջ Աստղիկ Անտոնեանի, զաւակներուն Վիֆի եւ ամուսնոյն Սերն Ապտալեաններու, Վահրամ եւ տիկնոջ Ռոզաննա Անտոնեաններու, թոռներուն Զաւենի եւ Լուսինի: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՆՈՒՊԱՐ ԱԲԳԱՐ ԱԻԵՏԵԱՆԻ եւ ԷՄՄԱ ԼԱՋԻՆԵԱՆԻ մահուան ֆառասումքին առթիւ, խնդրանքով իրենց եղբոր/ քրոջ զաւակին Սեդա Կապրիէլի եւ իր ընտանիքին: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՎԱՀԷ ՄԻՀՐԱՆԵԱՆԻ մահուան 3rd տարելիցին առիթով, խնդրանքով՝ Տիկնոջ Նահրա Միհրանեանի եւ զաւակներուն Սիմոնի եւ Ռուբէնի, մօր Մարի Միհրանեանի, եղբոր Համազասպ եւ տիկնոջ Սեդա Միհրանեաններու, Դալար Մարտիրոսեանի, քրոջ Նէլլի եւ ամուսնոյն Տոֆտ. Պերն Քալամֆէրեաններու եւ իրենց զաւակներուն, եղբոր Խաչիկ եւ տիկնոջ Մակի Միհրանեաններու եւ իրենց զաւակներուն: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՌՈՒԲԷՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ եւ ԱՄԹԷՆ ԽԱԼԱԹԵԱՆԻ հոգիներուն համար, խնդրանքով իրենց դուստրերուն՝ Նահրա Միհրանեանի, Նէլլի Սահակեանի եւ Լուսինէ Սահակեանի եւ իրենց ընտանիքներուն:

HOKEHANKIST

will be said for.....

January 3

Hokehankist will be said for **MARIAM MEGRDICHIAN** on the 3rd year of her passing, requested by her daughter Rosie and husband Bryan Bedrosian, grandson Armen and his wife Stephanie Bedrosian and their children Lillian and Vivian.

Hokehankist will be said for **LUCILLE GAHVEJIAN** on the 1st year of her passing and **JACK GAHVEJIAN** on the 4th year of his passing, requested by their daughters Jackie Hollingsworth, Leslee Minas, Lisa Moody, and their children.

Hokehankist will be said for **SARKIS SAHATDJIAN** on the 5th year of his passing, **MILDRED SHIRIN** on the 5th year of her passing, and **ED SHIRIN** on the 13th year of his passing, requested by Iris Sahatdjian, Victor and Arlyne Sahatdjian and family, Mark and Margaret Shirin and family, and Bill and Christine Sahatdjian and Family.

January 10

Hokehankist will be said for **HOVSEP ANTONIAN** on the 40th day of his passing, requested by his wife Asdghig Antonian, children Vicki and husband Serge Abdalian, Vahram and wife Rosanna Antonian, and grandchildren Zaven and Lucine. *Altar flowers are donated in his memory.*

Hokehankist will be said for **NOUBAR APKAR AVEDIAN AND EMMA LATCHINIAN**, on the 40th day of their passing, requested by their niece Seta Gabriel and her family. *Altar flowers are donated in their memory.*

Hokehankist will be said for **VAHE MIHRANIAN** on the second year of his passing, requested by his wife Naira Mihranian and sons Simon and Roupén, mother Mary Mihranian, brother Hamazasb and wife Seta Mihranian, Talar Mardirosian, sister Nelli and husband Dr. Berj Kalamkarian and their family and brother Katchig and wife Maggie Mihranian and family. *Altar Flowers are donated in his memory.*

Hokehankist will be said for **ROUPEN SAHAGIAN AND ASHKHEN KHALATIAN** as requested by their daughters Naira Mihranian, Nelli Sahakian and Lousine Sahakian and their families.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Պաշտօն պիտի կատարուի.....,

Յուևուար 10 (Մար.)

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ԽՏՐԵԱՆ, ՊԻՏԱՆԵԱՆ, ԵՒ ՔԷՄԻՄԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐՈՒ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ համար, խնդրանքով Պետրոս եւ Սիլվա Խորեաններու եւ գաւակներուն եւ վարուժ Բէշիշեանի:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՅՈՎԱԵՓ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան 12-րդ տարելիցին առիթով, խնդրանքով տիկնոջ՝ Ամժել Մանուկեանի, գաւակներուն՝ Աւօ եւ Էլիզ Մանուկեաններու, Մարալ Մանուկեանի, Կարօ Մանուկեանի, թոռներուն՝ Յովսէփի, Ամժելիֆաի եւ Ալէսի, նաեւ Սարգիս եւ Սաթիկ Ագիներաններու, Յակոբ եւ Վարդիմէ Ագիներաններու: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՌՈՒԲԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ, ԼԵՒՐՆ ԵՒ ԳԱՐՁՈՒՉԻ ՏՕՆԱՊԵՏԵԱՆՆԵՐՈՒ, ԱԼԷՔՍ ԵՒ ԳՈՀԱՐ ՅԱԿՈԲԵԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՅԱԿՈԲԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒՆ հոգիներուն համար, խնդրանքով՝ Հէլէն Տօնապետեանի եւ ընտանիքին: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՍԱՐԳԻՍ ԵՒ ԹԱԳՈՒՉԻ ԽԱԶԻԿԵԱՆՆԵՐՈՒ, ՄԱՐԻԷԹԱ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ, ԵՒ ԲԷՆԵԱՄԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ հոգիներուն համար, խնդրանքով Տոմ. Կարօ եւ տիկնոջ՝ Նուլէ Խաչիկեաններու եւ Մանուէլ եւ Մարիա Խաչիկեաններու:

Յուևուար 17

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Լիբանանի Համազգայինի Մ. Եւ Հ. Արշալանեան Հեմարանի երկարամեայ Ուսուցիչ եւ Կրթական Տեսուչ՝ ԱԼԻՍ ԳԱԶԱՆՉԵԱՆԻ մահուան քառասունփին առթիվ, խնդրանքով եղբօր աղջկան Լիա եւ ամուսնոյն Յանի Քիւլիւիֆեաններու, Նազիկ Արիսեանի եւ ընտանիքին, ինչպէս նաեւ Գազանեան, Գասպարեան, Քիւլիւիֆեան ընտանիքներուն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՅԵՂ ՍԱՐԱՅԵԱՆԻ եւ իր փեսային, ՅԻՄ ԳԷՍԻՏԻ մահուան առաջին տարելիցին առիթով, խնդրանքով Յէգին տիկնոջ Պարպարա Սարաֆեանի, դուստրերուն Յէգի Սարաֆեանի, Փամ Գէսիտիի, թոռներուն Թոմաս Մեզլիանի եւ Սթեֆընի Գէսիտիի: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՎԱՐԴԱՆՈՒՄ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ մահուան 18-րդ տարելիցին առիթով, ինչպէս նաեւ ԱՐՏԱՏԷՍ, ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՓՕԼ ԷՔՄԱԼԵԱՆՆԵՐՈՒ, հոգիներուն համար, խնդրանքով՝ Ալէն եւ Մարի Էփապեաններու եւ ընտանիքի: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՅԱՆ ԵՒ ԿՐԷՅՍ ԳԱՐԻԷԼԵԱՆՆԵՐՈՒ եւ ՀԱՄԱՅՆ ԳԱՐԻԷԼԵԱՆ եւ ԱՀԱՐՈՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ հոգիներուն համար, խնդրանքով՝ Մարվին եւ Հէլէն Գաբրիելեաններու եւ Սթեֆընի Գաբրիելյանի եւ իրենց ընտանիքներուն: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

HOKEHANKIST

will be said for.....

January 10, (Con't)

*Hokehankist will be said for **DECEASED MEMBERS OF THE KHEDERIAN, BIDANIAN AND KESHISHIAN FAMILIES**, requested by Bedros and Silva Khederian and their family and Varouj Keshisian.*

*Hokehankist will be said for **HOVSEP MANOUKIAN** on the 12th year of his passing, as requested by his wife Angel Manoukian, his children Avo & Eliz Manoukian, Maral Manoukian, Garo Manoukian, grandchildren Hovsep, Angelica, and Alex, as well as Sarkis & Satik Adjinian, Hagop & Vardine Adjinian. *Altar flowers are donated in his memory.**

*Hokehankist will be said for **RUBEN DONABEDIAN, LEVON & KARZOUHIE DONABEDIAN, ALEX & KOHAR HAGOPIAN AND ALL DECEASED MEMBERS OF THE DONABEDIAN AND HAGOPIAN FAMILIES** requested by Helen Donabedian and Family. *Altar Flowers are donated in their memory.**

*Hokehankist will be said for **SARKIS & TAKOUHI KHATCHIKIAN, MARIETTA HOVHANNISYAN AND BENIAMIN PETROSIAN**, requested by Dr. Garo & wife Nouné Khatchikian and Manuel & Maria Khatchikian.*

January 17

*Hokehankist will be said for **ALICE KAZANJIAN**, on the 40th day of her passing, requested by her niece Lea and husband Johnny Kullukian, Nazik Arisian and her family, and the Kazanjian, Kasparian and Kullukian Families,*

*Hokehankist will be said for **JACK SARAFIAN** and his son-in-law, **JIM CASSIDY**, on the 1ST year of their passing, requested by Jack's wife Barbara Sarafian, Jackie Sarafian, Pam Cassidy and grandchildren Thomas McLean and Stephanie Cassidy. *Altar flowers are donated in their memory.**

*Hokehankist will be said for **VARTANOUCHE KALUSTIAN** on the 18th year of her passing and **ARDACHES, ANTRANIG AND PAUL EKMALIAN** requested by Alain and Mary Ekmalian and family. *Altar flowers are donated in their memory.**

*Hokehankist will be said for **JOHN AND GRACE CAPRELIAN AND ALL DECEASED MEMBERS OF THE CAPRELIAN AND AHARONIAN FAMILIES**, requested by Marvin and Helen Caprelian and Stephanie Caprelian and their families. *Altar flowers are donated in their memory.**

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Պաշտօն պիտի կատարուի.....,

Յուևուար 24

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՏԷՅՎՂՏ ՌԱՅԹԻ մահուան ֆառասունֆին առիթով, խնդրանօք քրոջ Սուզան եւ ամուսնոյն Գրիգոր Փօլատեաններու եւ ընտանիքի: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարուի ՍՈՒԶԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ մահուան 2-րդ տարելիցին առիթով, խնդրանօք ամուսնոյն Մասիս Կարապետեանի, զաւակներուն Րաֆֆի եւ տիկնոջ Էրիֆա Կարապետեաններու, Լօրի եւ Մանօ Միմասեաններու, թոռներուն՝ Թաթիանա, Ալինա, Ճէսի եւ Նիֆըլըս, նաեւ Մհեր եւ Վանտա Խօստեղեաններու: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարուի ՐԱՅՅԻ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահուան երրորդ տարելիցին առիթով, խնդրանօք զաւակներուն՝ Րաֆֆի Մուրատեանի եւ Էրիֆ եւ Լենա Մուրատեաններու եւ իրենց Անիի:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՄԱՐԻ ՄՕՐԹԱՆՆԱՆԻ մահուան երրորդ տարելիցին առիթով, խնդրանօք զաւակներուն՝ Տօֆտ. Յէնիս եւ ամուսնոյն Լէս Էմերզեաններու, Րան եւ տիկնոջ Պարպարա Մօրթանեաններու. Թոռնիկներուն՝ Դաւիթ եւ Նաթալի Էմերզեաններու, Էրըն եւ Էլլի Էմերզեաններու, Էտամ եւ Քորթնի Մորթանեաններու, Փօլ Մորթանեանի. եւ ծոռներուն Օլիվիա, Ճէյֆըս, Սֆարլէթ, Էլվա, Քօլէթ եւ Քէյտըն Էմերզեաններու: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Յուևուար 31

